**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«-----» ----------2023թ.** **N --------- Ա**

## ՈՐՈՇՈՒՄ

### ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի փետրվարի 27-ի N 694-Ն որոշման հավելվածի 3-րդ կետը, «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության նախագահի գրությունը.

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևանի Ծովակալ Իսակովի պողոտայի 27/8 հասցեում գտնվող Երևան համայնքի սեփականություն հանդիսացող ընդհանուր 11762,5 քառ. մետր մակերեսով հեծանվահրապարակի շենքը, շինությունները և դրանց զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 2 հա հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.28112014-01-0212 վկայական) (այսուհետ՝ գույք) անհատույց օգտագործման իրավունքով, 5 տարի ժամկետով տրամադրել «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպությանը:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ գույքի պահպանման և շահագործման ծախսերի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով, սույն որոշման 1-ին կետում նշված ժամկետում ընդգրկված յուրաքանչյուր տարվա համար հաստատված Երևան քաղաքի բյուջեի միջոցներից 70.000.000 (յոթանասուն միլիոն) ՀՀ դրամ հատկացնել «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպությանը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստան» մարզական հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանել է Երևան քաղաքի Գրիգոր Լուսավորիչ 4 հասցեում գտնվող 1.388.1 հեկտար հողամասն ու այդտեղ տեղակայված 9018,6 քառ. մետր մակերեսով շենքը և 615,6 քառ. մետր մակերեսով հեծանվահրապարակի շինությունները: ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի N 955-Ն որոշմամբ վերոնշյալ գույքը նվիրաբերվել է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Երևանի քաղաքապետարանի, պայմանով, որ նվիրաբերության առարկայի հետագա օտարումից ստացված միջոցներն ամբողջությամբ ուղղվելու են Երևան քաղաքում միջազգային չափանիշներին համապատասխան նոր հեծանվահրապարակի կառուցման և համաքաղաքային նշանակության այլ կապիտալ ծախսերի ֆինանսավորմանը: ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման արդյունքում Երևան քաղաքի Իսակովի պողոտայի հ.27/8 հասցեում կառուցվել է նոր հեծանվահրապարակ, որի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է Երևան համայնքի անվամբ:

Երևան քաղաքի Իսակովի պողոտայի հ.27/8 հասցեում գտնվող հեծանվահրապարակը Հայաստանի Հանրապետության տարածքում միջազգային չափորոշիչներին համապատասխանող միակ հեծանվահրապարակն է, իսկ Երևան համայնքն ունենալով նման հեծանվահրապարակ, սակայն չունենալով հեծանվասպորտի գործող մարզադպրոց, հնարավորություն չունի այդ գույքը ծառայեցնել իր նպատակին, որի արդյունքում Հայաստանի Հանրապետությունում հեծանվային սպորտի զարգացմանը հասցվում է մեծ վնաս:

Ավելի քան 20 տարի է «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության կողմից հիմնադրվել է Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության Երևանի հեծանվային սպորտի օլիմպիական հերթափոխի մասնագիտացված դպրոցը, որը Երևան քաղաքում հեծանվային սպորտի ոլորտում մասնագիտացված, երկարատև գործունեություն իրականացնող, սպորտաձևին տիրապետող պրոֆեսիոնալ մարզիչներով համալրված միակ մարզադպրոցն է, որը մինչ այդ իր գործունեությունը ծավալել է այդ հեծանվահրապարակում՝ տարբեր մրցաշարերում, այդ թվում՝ միջազգային, գրանցելով լավագույն արդյունքներ և նվաճելով մեդալներ, հետևաբար նպատակահարմար է հեծանվահրապարակը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպությանը՝ այն իր նշանակությանը համապատասխան շահագործելու նպատակով, ինչը կնպաստի Երևան քաղաքում հեծանվասպորտի զարգացմանը և մասսայականացմանը, ինչպես նաև նոր նվաճումներ ունենալուն:

Մինչ այդ, մասնագիտացված դպրոցի գործունեությունը տվյալ հեծանվահրապարակում իրականացնելու հանգամանով պայմանավորված, դպրոցում աշխատում են նաև հեծանվահրապարակի պահպանումն ու շահագործումն ապահովող համապատասխան մասնագետներ, որոնք գույքի անհատույց օգտագործման տրամադրման դեպքում նույնպես շարունակելու են իրականացնել այն: Հաշվի առնելով, որ հեծանվահրապարակի պահպանումը և շահագործումը պահանջում են զգալի ծախսեր, իսկ կազմակերպությունն ինքնին չի հետապնդում շահույթ ստանալու նպատակ, հետևաբար այդ գործընթացն առավել արդյունավետ և պատշաճ իրականացնելու հանգամանքով պայմանավորված, նախատեսվում է Երևան քաղաքի բյուջեից ֆինանսական աջակցություն ցուցաբերել «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպությանը՝ այդ ծախսերի մի մասը հոգալու նպատակով:

Վերոգրյալ հանգամանքից ելնելով Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Գույք տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**